

Վենետիկ. տպագրութեան օրօրան

ՔՐՈՆԻԿՈՆ

Աղբիւրի, Տարազի եւ Գրաբար - Գեղագիտական Սալոնի կողմից ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱԿՐԹԱԿԱՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ տօնախմբութեան առիթով մեր աշխատակիցներ՝ Գերապատիւ Յուսիկ արքեպիսկոպոս, Տ. Գարեգին, Տ. Գարեգին և Տ. Նիգողայոս Տէր-Աւետիքեան վարդապետները, Գէորգեան Ճեմարանի ուսուցչ. պ.պ. Ստեփան Անանեան և Յարութիւն Պետրոսեան կը մատուցանեն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ.Տ. Գէորգ V-ին շնորհաւորութիւններ 1500-ամեայ Հայ Գրի և 400-ամեայ Հայ տպագրութեան առիթով և կը մասնակցեն, իբրև լիազօր մեր ներկայացուցիչներ, յօբելեանական հանդէսներին և սրա շուրջը խորհրդակցութիւններին, ժողովներին։

—Վաղը, շաբաթ, Վանքի մայր տաճարում Ներսիսեան, Յովհաննան և Թիֆլիսի բոլոր դպրոցներում կը կատարեն Համազգային Յոբելեանի առիթով հանդէսներ։ Գաւառական բոլոր հայ եկեղեցիներում և դպրոցներում կատարելու են նոյնպէս հանդէսներ։

—

Հ. Պոլսի հայոց ազգային կենտրոնական վարչութեան Ուսումնական Խորհուրդը պաշտօնական գրութեամբ յանձնարարել է հայ գրագէտ Ստ. Մալխասեանցին գնալ Էջմիածին և մասնակցել հոկտ. 13-ի մեծ տօնին յանուն ազգային վարչութեան։

—

Հայոց Միացեալ Ընկերութիւնը լիազօրել է պ. պ. Հ. Առաքելեանին, Ալ. Բալանթարին, բժշ. Շիսեանին, բժշ. Կ. Ստեփանեանին և Յ. Սպէնդիարեանին՝ գնալ Էջմիածնին, իբրև ներկայացուցիչներ ընկերութեան և մասնակցել ազգային մեծ տօնին։

—

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը պաշտօնական գրութեամբ լիազօրել է պ. պ. Հ. Առաքելեանին և Ս. Կիւլպէնկեանին՝ գնալ Էջմիածին, իբրև պատուիրակներ Միութեան և մասնակցելով մեծ Յոբելեանին, մատուցանել Վեհ. Կաթողիկոսին Միութեան կենտրոնի, հարիւրաւոր մասնաճիւղերի և հազարաւոր անդամների սրտագին շնորհաւորութիւնները։

Միութիւնը յայտնում է, որ նա իր մասնակցութիւնն ևս կը բերէ ձեռնարկուած դպրոցական ֆոնդին։

—

—Երէկ, հինգշաբթի, հոկտ. 11-ին երեկոյեան, Թիֆլիսի հայ հասարակութեան բոլոր խաւերից մի ժողով Մանթաշեանի առուտ. դպր. նորակառոյց հոյակապ դահլիճում, պ. Հ. Առաքելեանի նախագահութեամբ ընտրեց հինգ հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն, որ Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից ս. Էջմիածնում վաղը ողջունէ համազգային Մեծ Տօնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսին և մասնակցէ տօնախմբութեանը։

Նոյն ժողովում ընտրուեց և մնայուն յօբել. յանձնաժողով, իբրև ս. Էջմիածնայ Կենտր. Յանձնաժողովի տեղական ճիւղ։

ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԵՐՍԻՍԵԱՆ

Ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերներ նկարողը։ Իսկականները, ձիթանկար ս. Թարգմանիչների վանքում Գանձակի մօտ։

Հայրենասէր-իդէալիստ նկարչի գերեզմանը Թիֆլիսի Խոջիվանքում հողին է հաւասարուել։ Հրաւիրում ենք արուեստագէտներին և գրականագէտներին, Համազգային Յոբելեանի առիթով, մի քար գցել իդէալիստ, հաղուագիւտ վեհանձն այդ մարդու գերեզմանին։

ՆՈՐԵԿՈՑՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆՆԵՐ

Բ. Ս. и Ш. Х. Наша азбука, Иллюстрированная оригинальными рисунками изъ кавказ. жизни. Յարմարեցուած Կովկ. ուսումնարանի համար, 71 եր. գինը 30 կ.։ Կազմողները շատ գեղեցիկ միտք են յղացել պատկերազարդելով այս այբենարանը Կովկ. մայրենի երկրի նկարներով, որով անհամեմատ հեշտ է տեղական մանուկներին ուսուցանել ռուերէն լեզուն։ Անտարակոյս այս դասագիրքը մեծ ընդունելութիւն կը գտնի, մանաւանդ մեր ծխական դպրոցներում։ Կազմուած է խնամքով, պատկերները համապատասխան, տպագրութիւնն ու թուղթը գեղեցիկ։

Գր. Տէր-Պողոսեան՝ Լեռն իբրեւ պաշտպան, 16 եր. գինը 20 կ. փաստաբանից և դոկումենտալ ապացուցանելով Լէօի գործած մեղանչումները իրականութեան դոկումենտների դէմ Կ. Հ. Բ. Ը. 30-ամեակը կազմելիս և փաստերի շարանները մէկը միւսի ետեւից հրապարակ հանելով, դոկումենտներ կեղծող Լէօին անուանում է «ան ոտս մեծատանց եւ անուանեաց ղեզերող, թափթփուկ ներբողներ յօրինող» և ասում «գէթ մեռած գնացած գործիչների յիշատակի առաջ իր գրիչը սարսափէր և խորտակուէր»։ Այս բոլոր հին դարմանը նոր քամուն է տալիս հեղինակը, որպէսզի Լէօին չըյանձնուի գրելու Ղարաբաղի թեմ. դպրանոցի պատմութիւնը և պահպանուի մեր բանասիրական-պատմական գրականութեան պատիւը։